02.09.2022թ.

ԷԱՃԱՊՁԲ-2022/16-26-ԵՊԲՀ-9 ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում հանրային հսկողություն իրականացնող անձի կողմից տրված դիրքորոշման քննարկման ամփոթաթերթ:

1. Տվյալներ քննարկման անցկացման վայրի, ժամի և ներկա մասնակիցների վերաբերյալ

1.1 Քննարկումը մեկնարկել է սույն թվականի սեպտեմբերի 1-ին ժամը 16:15-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի վարչական մասնաշենքում և ավարտվել 17:30-ին:

1.2 Քննարկմանը ներկա էին պայմանագրի կողմ հանդիսացող «Աննարկա» ՍՊ ընկերության ներկայացուցիչները, հանրային հսկողություն իրականացնող անձ՝ «Ար.Մեդտեխնիկա» ՍՊ ընկերության ներկայացուցիչը, պատվիրատուի՝ ԷԱՃԱՊՁԲ-2022/16-26-ԵՊԲՀ-9 ծածկագրով գնման պայմանագրի կատարման և կառավարման գործառույթն իրականացնող անձը, պատվիրատուի գնումների բաժնի ղեկավարը և բաժնի մեկ մասնագետ:

2. Քննարկում անցկացնելու իրավատության վերաբերյալ

2.1 «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 5.1-րդ հոդվածով սահմանված պահանջ:

3. Քննարկման առարկայի վերաբերյալ

3.1 Հանրային հսկողություն իրականացնող անձի կողմից պայմանագրով սահմանված ապրանքի և «Աննարկա» ՍՊ ընկերության կողմից փաստացի մատակարարված ապրանքի թվով երեք չափորոշիչների անհամապատասխանությունների վերաբերյալ տրված դիրքորոշումը հետևյալն է՝

#	Պահանջվող տեխ.բնութագրեր	Պայմանագրում ներկայացված տեխ.բնութագրեր	Մեկնաբանություն	Դիրքորոշում
1	NIBP, HEART RATE, TEMP, SPO2, RESP, տվյալների պահպանում (ոչ պակաս քան 300 ժամ)	NIBP, HEART RATE, TEMP, SPO2, RESP, տվյալների պահպանում (300 ժամ)	Ըստ սարքի հետ մատակարարված օգտագործման ձեռնարկի, այս ցուցանիշը կազմում է 160 ժամ: Քանի որ մատակարար ընկերության ներկայացուցիչը պնդում էր, որ իրական ժամանակը 300 ժամից պակաս չէ, հանրային վերահսկողություն իրականացնող մեր ընկերության ներկայացուցիչը առաջարկել է փաստացի ստուգել տվյալների պահպանման տևողությունը: Աննարկա ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից մոնիտորը միացվել է համապատասխան աշխատանքային ռեժիմում և սկսվել է տվյալների	Չի համապատասխանում ներկայացված և պահանջված տեխնիկական բնութագրիչին

			գրանցումը: Գրանցման ռեժիմում մոնիտորը միացված է եղել 300 ժամից ավել: Այս ժամանակից հետո Անհարկա ՍՊ ընկերության ներկայացուցիչը մեր ընկերության ներկայացուցչի ներկայությամբ ստուգել է փորձի արդյունքները: Արձանագրվել է, որ պահպանվել են մոտ 84 ժամ տևողությամբ տվյալները՝ որպես մեկ ֆայլ: Դրանից հետո պահպանումը ավարտվել է և 20 վրկ. Հետո սկսվել է նոր ֆայլով տվյալների պահպանում, որն էլ տևել է մոտ 180 ժամ: Դրանից հետո գրանցումը և պահպանումը դադարել են, նոր գրանցում կամ նոր ֆայլով պահպանում այլևս չի եղել: Հանրագումարային երկու ֆայլով տվյալները պահպանվել են մոտ 264 ժամ: Հետևաբար, կիրառական փորձի արդյունքում 300 ժամ տվյալների պահպանման հնարավորությունը չի ապացուցվել:	
2	Սրտի զարկերի հաճախականությունը ոչ պակաս, քան՝ 0-250 զարկ/րոպե, ճշգրտությունը՝ ± 3 զարկ/րոպե կամ ավելի ճշգրիտ	Սրտի զարկերի հաճախականությունը՝ 0-250 զարկ/րոպե, ճշգրտությունը՝ ± 3 զարկ/րոպե	Ըստ սարքի հետ մատակարարված օգտագործման ձեռնարկի, ինչպես նաև ըստ ավելի ուշ էլեկտրոնային եղանակով տրամադրված PDF օգտագործման ձեռնարկի և արտադրողի ներկայացուցչի կողմից պատվիրատուին ներկայացրած հաստատման նամակի (Confirmation Letter), այս ցուցանիշը կազմում է 20-254 զարկ/րոպե: Փաստացի, կնքված պայմանագրում նշված բնութագրիչը չի համապատասխանում Մատակարարի կողմից ներկայացված 3 փաստաթղթերից որևէ մեկում նշված տվյալին:	Չի համապատասխանում ներկայացված և պահանջված տեխնիկական բնութագրիչին
3	Մեկ մոնիտորից ստացված դիտորդական ինտերֆեյսը պարունակում է... • Մոնիտորինգի մեկնարկի ժամանակը	Մեկ մոնիտորից ստացված դիտորդական ինտերֆեյսը պարունակում է... • Մոնիտորինգի մեկնարկի ժամանակը	Մոնիտորների հետ մատակարարված օգտագործման ձեռնարկում, ինչպես նաև անհամապատասխանությունների արձանագրումից հետ Մատակարարի կողմից տրամադրված էլեկտրոնային PDF ֆայլով նոր օգտագործման ձեռնարկում կամ Արտադրողի կողմից ուղարկված հաստատման նամակում այս պարամետրի մասին ինֆորմացիա չկա: Ուստի առաջարկվել է ստուգել այս պարամետրի փաստացի առկայությունը: Մոնիտորինգային համակարգին 1 կամայական խնամյալի մոնիտոր միացնելուց հետո ստուգվել է դիտորդական ինտերֆեյսում արտացոլվող ինֆորմացիան, որը, սակայն, չի պարունակում մոնիտորինգի մեկնարկի ժամանակի տվյալները: Ըստ Մատակարարի ներկայացուցչի բանավոր հավաստման՝ Արտադրող ընկերությունը հաստատել է, որ այս պահին այդ պարամետրը բացակայում է, սակայն հետագայում միգուցե հնարավոր է	Չի համապատասխանում ներկայացված և պահանջված տեխնիկական բնութագրիչին

			մոնիտորինգային համակարգի ծրագրային թարմացում, որի մեջ կարող է հաշվի առնվել այս դիտարկումը: Փաստացի, այս պահին արձանագրվել է, որ բնութագրիչը չի համապատասխանում:	

4. Քննարկման առակա հանդիսացող սույն ամփոփաթերթի 3.1-րդ կետում ներկայացված աղյուսակի 1-ին կետով արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ կողմերի ներկայացված կարծիքները

4.1 Հանրային հսկողություն իրականացնող անձի դիրքորոշումը հետևյալն է՝

Անձը հայտնել է, որ մատակարարված ապրանքի համապատասխանության ստուգման նպատակով առաջնորդվել է «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից մատակարարված սարքի տվյալների փաստացի արդյունքներով և սարքի հետ մատակարարված սարքի պաշտոնական օգտագործման ձեռնարկով:

Անձի դիրքորոշման մյուս մասը կրկնում էր սույն ամփոփաթերթի 3.1-րդ կետում ներկայացված աղյուսակի 1-ին կետով արձանագրված անհամապատասխանությունը և դրա հայտնաբերման մեխանիզմը:

4.2 Պայմանագի կատարման և կառավարման գործառույթն իրականացնող անձի դիրքորոշումը հետևյալն է՝

Անձը հայտնել է, որ մատակարարված ապրանքի համապատասխանության ստուգման նպատակով նույնպես առաջնորդվել է «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից մատակարարված սարքի տվյալների փաստացի արդյունքներով և սարքի հետ մատակարարված սարքի պաշտոնական օգտագործման ձեռնարկով, և որ վերջինս համաձայնվում է հանրային հսկողություն իրականացնող անձի կողմից ներկայացված դիրքորոշման հետ:

4.3 Պայմանագրի կողմ հանդիսացող ընկերության ներկայացուցիչների դիրքորոշումը հետևյալն է՝

Կողմը հայտնել է, որ պացիենտին կարդիոմոնիտորինգային համակարգին միացնելուց անմիջապես հետո մեկնարկում է պահանջվող տվյալների պահպանումը մինչև 300 ժամ, սակայն եթե նշված ժամանակահատվածում պացիենտին ժամանակավոր անջատում են համակարգից տվյալների պահպանումը ավարտվում է և վերսկսվում զրոից նույն պացիենտին համակարգին միացնելուց անմիջապես հետո և տվյալ պարագայում եթե պացիենտը միացված լինի համակարգին 300 ժամվա ընթացքում՝ հաշվի չառնելով անջատումների ժամանակահատվածը, ապա հանրագումարային առումով համակարգը կկատարի 300 ժամվա չափով տվյալների պահպանում:

4.3 Քննարկման արդյունքում կողմերի ձեռք բերված պայմանավորվածությունը սույն ամփոփաթերթի 3.1-րդ կետում ներկայացված աղյուսակի 1-ին կետով արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրային հսկողություն իրականացնող և պայմանագրի կատարման և կառավարման գործառույթն իրականացնող անձերի և պայմանագրի կողմ հանդիսացող ներկայացուցիչների կարծիքները հակասում էին միմյանց և այն որ պայմանագրի կողմ հանդիսացող անձի ներկայացված կարծիքի ճշտությունը հաստատելու նպատակով սարքի տվյալ չափորոշիչի համապատասխանությունը կրկին պետք է ստուգվի փաստացի՝ միևնույն պացիենտին առնվազն 300 ժամ տևողությամբ համակարգին միացնելու ճանապարհով, ինչը տվյալ պահին անհնար է, կողմերը որոշեցին՝

պայմանագրով սահմանված՝ «մոնիտորի էկրանին NIBP, HEART RATE, TEMP, SPO2, RESP, տվյալների պահպանում (ոչ պակաս քան 300 ժամ)» չափորոշիչի և փաստացի մատակարարված սարքի համապատասխան չափորոշիչի միմյանց համապատասխանությունը ստուգելու նպատակով լրացուցիչ ուսումնասիրել և առաջնորդվել սարքի հետ մատակարարված նույն սարքի պաշտոնական օգտագործման ձեռնարկով:

5. Քննարկման առարկա հանդիսացող սույն ամփոփաթերթի 3.1-րդ կետում ներկայացված աղյուսակի 2-րդ կետով արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ կողմերի ներկայացված կարծիքների վերաբերյալ

5.1 Հանրային հսկողություն իրականացնող անձի դիրքորոշումը հետևյալն է՝

Անձը հայտնել է, որ մատակարարված ապրանքի համապատասխանության ստուգման նպատակով առաջնորդվել է «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից մատակարարված սարքի հետ առկա սարքի պաշտոնական օգտագործման ձեռնարկով:

Անձի դիրքորոշման մյուս մասը կրկնում էր սույն ամփոփաթերթի 3.1-րդ կետում ներկայացված աղյուսակի 1-ին կետով արձանագրված անհամապատասխանությունը և դրա հայտնաբերման մեխանիզմը:

5.2 Պայմանագի կատարման և կառավարման գործառույթն իրականացնող անձի դիրքորոշումը հետևյալն է՝

Անձը հայտնել է, որ մատակարարված ապրանքի համապատասխանության ստուգման նպատակով նույնպես առաջնորդվել է «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից մատակարարված սարքի հետ առկա սարքի պաշտոնական օգտագործման ձեռնարկով:

Անձը հայտնել է նաև, որ սրտի զարկերի համար պայմանագրով սահմանված տիրույթի առկայությունը շատ կարևոր է և մատակարարված սարքի տվյալ չափորոշիչը պետք է համապատասխանի պայմանագրի պահանջներին:

4.3 Պայմանագրի կողմ հանդիսացող ընկերության ներկայացուցիչների դիրքորոշումը հետևյալն է՝

Կողմը հայտնել է, որ մատակարարված սարքի տվյալ չափորոշիչը համապատասխանում է պայմանագրով սահմանված՝ «SPO2 սրտի զարկերի հաճախականությունը՝ 0-250 զարկ/րոպե, չշգրտությունը՝ ±3%» չափորոշչին:

5.3 Քննարկման արդյունքում կողմերի ձեռք բերված պայմանավորվածությունը սույն ամփոփաթերթի 3.1-րդ կետում ներկայացված աղյուսակի 1-ին կետով արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրային հսկողություն իրականացնող և պայմանագի կատարման և կառավարման գործառույթն իրականացնող անձերի և պայմանագրի կողմ հանդիսացող ներկայացուցիչների կարծիքները հակասում էին միմյանց և այն, որ պայմանագրի կողմ հանդիսացող անձի ներկայացված կարծիքի ճշտությունը հաստատելու նպատակով սարքի տվյալ չափորոշիչի համապատասխանության փաստացի ստուգումը տվյալ պահին անհնար է իրականացնել, կողմերը որոշեցին՝

պայմանագրով սահմանված՝ «SPO2 սրտի զարկերի հաճախականությունը՝ 0-250 զարկ/րոպե, չշգրտությունը՝ ±3%» չափորոշիչի և փաստացի մատակարարված սարքի համապատասխան չափորոշիչի միմյանց համապատասխանությունը ստուգելու նպատակով լրացուցիչ ուսումնասիրել և առաջնորդվել սարքի հետ մատակարարված նույն սարքի պաշտոնական օգտագործման ձեռնարկով:

6. Քննարկման առարկա հանդիսացող սույն ամփոփաթերթի 3.1-րդ կետում ներկայացված աղյուսակի 3-րդ կետով արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ կողմերի ներկայացված կարծիքների վերաբերյալ

6.1 Հանրային հսկողություն իրականացնող անձի դիրքորոշումը հետևյալն է՝

Անձը հայտնել է, որ մատակարարված ապրանքի համապատասխանության ստուգման նպատակով առաջնորդվել է «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից մատակարարված սարքի տվյալների փաստացի արդյունքներով և սարքի հետ մատակարարված սարքի պաշտոնական օգտագործման ձեռնարկով:

Անձի դիրքորոշման մյուս մասը կրկնում է սույն ամփոփաթերթի 3.1-րդ կետում ներկայացված աղյուսակի 1-ին կետով արձանագրված անհամապատասխանությունը և դրա հայտնաբերման մեխանիզմը:

6.2 Պայմանագի կատարման և կառավարման գործառույթն իրականացնող անձի դիրքորոշումը հետևյալն է՝

Անձը հայտնել է, որ մատակարարված ապրանքի համապատասխանության ստուգման նպատակով առաջնորդվել է «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից մատակարարված սարքի տվյալների փաստացի արդյունքներով և սարքի հետ մատակարարված սարքի պաշտոնական օգտագործման ձեռնարկով, և վերջինս համաձայնվում է հանրային հսկողություն իրականացնող անձի կողմից ներկայացված դիրքորոշման հետ:

6.3 Պայմանագրի կողմ հանդիսացող ընկերության ներկայացուցիչների դիրքորոշումը հետևյալն է՝

Կողմից պնդմամբ, պայմանագրով սահմանվել է, որ մեկ մահճակալից ստացված դիտորդական ինտերֆեյսը պարունակում է մոնիտորինգի մեկնարկի ժամանակը:

Քննարկման ընթացքում պայմանագրի կողմը հայտնել է նաև, որ մեկնարկի ժամանակը արտացոլվում է դիտորդական ինտերֆեյսում, սակայն ժամանակը դիտելու համար անհրաժեշտ է նույն ինտերֆեյսում կատարել լրացուցիչ գործողություն:

Ներկայացվել է նաև վերոնշյալ պնդման հիմնավորումը մատակարարված սարքի նկարահանված դիտորդական ինտերֆեյսում մոնիտորինգի մեկնարկի ժամանակի պատկերով:

6.4 Քննարկման արդյունքում կողմերի ձեռք բերված պայմանավորվածությունը սույն ամփոփաթերթի 3.1-րդ կետում ներկայացված աղյուսակի 1-ին կետով արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննարկման ընթացքում պայմանագրի կողմը ներկայացրել է տվյալ չափորոշչի պայմանագրին համապատասխանության հիմնավոր դիրքորոշում, կողմերը որոշեցին՝

Մատակարարված սարքի՝ «մեկ մահճակալից ստացված դիտորդական ինտերֆեյսը պարունակում է մոնիտորինգի մեկնարկի ժամանակը» չափորոշիչը համարել որպես պայմանագրին համապատասխանող:

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Մ.Ռ.Ջավախյան

Պատասխանատու ստորաբաժանման

գնման հայտը նախապատրաստող ներկայացուցիչ՝ Հ.Ս.Սիսակյան